ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2019թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ. 9Ա ՇԵՆՔԻ Հ.33 ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Գ.Նժդեհի փողոցի հ.9ա շենքի հ.33՝21.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական հ.23052019-01-0127 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուսաննա Կարապետյանին, Մարիաննա և Սիրանուշ Բարխուդարյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ.9Ա ՇԵՆՔԻ Հ. 33 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Գ.Նժդեհի փողոցի հ.9ա շենքի հ.33՝ 21.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Սուսաննա Կարապետյանին, Մարիաննա և Սիրանուշ Բարխուդարյաններին:

Գ.Նժդեհի փողոցի հ.9ա շենքի հ.33՝ 21.6քմ բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23052019-01-0127 վկայականի՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Սուսաննա Կարապետյանը սկսած 1995 թվականից փաստացի բնակվում է քննարկվող բնակարանում: Վերջինիս հետ համատեղ բնակվում են նաև նրա աղջիկները՝ Մարիաննա և Սիրանուշ Բարխուդարյանները /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Լիլիթ» համատիրության կառավարչի կողմից հաստատված 01.11.2019թ. հայտարարություն/: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 13.07.2019թ. տեղեկանքների՝ Սուսաննա Կարապետյանը 2002թ., Մարիաննա Բարխուդարյանը 2010թ., Սիրանուշ Բարխուդարյանը 2012թ. հաշվառված են վերը նշված հասցեում: Քննարկվող բնակարանը փաստացի շուրջ 20 տարի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 25/01/2019թ հ. ԱՏ-23/01/2019/-4-0070, 31/01/2019թ. ԱՏ-29/01/2019/-4-0057, ԱՏ-29/01/2019/-4-0056 տեղեկանքների համաձայն՝ Սուսաննա Կարապետյանի, Մարիաննա և Սիրանուշ Բարխուդարյանների անվամբ ՀՀ-ում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերջին հինգ տարվա ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի օտարման կամ ձեռք բերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ ընտանիքի անդամների սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ.9Ա ՇԵՆՔԻ Հ. 33 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Գ.Նժդեհի փողոցի հ.9ա շենքի հ.33 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ.9Ա ՇԵՆՔԻ Հ. 33 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Գ.Նժդեհի փողոցի հ.9ա շենքի հ.33 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**